«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
Տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր
Վ.Լ.Հարությունյան
30 հունիսի 2021թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՌՈԶԱ ՑՈՒՐԻԻ ԱՎԱԳՅԱՆԻ « ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, Ը.00.02 «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Մասնակցում էին՝ Վլադիմիր Հարությունյան՝ *ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ.*, Ռոբերտ Սարինյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ.*, Տիգրան Հարությունյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, դոցենտ*, Քրիստինե Բաղդասարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ*, Մերի Մանուչարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Սվետլանա Դալլաքյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Լիլիթ Սարգսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Բելլա Գաբրիելյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Գևորգ Հարությունյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Տաթևիկ Փարսադանյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Գրիգոր Մանուկյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Եվգենյա Հակոբյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Շողեր Պողոսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1991 թվականին Արցախի Հանրապետությունն անցում կատարեց շուկայական հարաբերություններին, ձեռնարկեց տնտեսական բարեփոխումներ, ստեղծեց ինստիտուցիոնալ կառավարման համակարգ, իրականացրեց պետական սեփականության ապակենտրոնացում և մասնավորեցում: Մասնավորեցման գործընթացը չստացավ տրամաբանական շարունակություն, որին խոչընդոտեցին պատերազմական իրավիճակները և իրավաօրենսդրական դաշտի անկատարությունը: Դրանց հետևանքով զգալիորեն կրճատվեց գործող ձեռնարկությունների թիվը, ինչն էլ մեծացրեց գործազուրկների քանակը, չստեղծվեց արդյունավետ շուկա, չձևավորվեց մասնավոր ձեռնարկատերերի խավ: Մնացած ձեռնարկություններն արդյունավետ կերպով մասնավորեցնելու նպատակով, անհրաժեշտ էր հստակեցնել մասնավորեցման ծրագրերը, իրականացնել մասնավորեցման ենթակա գույքի ճիշտ գնահատման քաղաքականություն, երկիրը նախապատրաստել տնտեսական աճի ապահովման համար նախադրյալների ձևավորմանը:

Արցախի Հանրապետությունում (ԱՀ) ներդրումների ներկայիս ծավալները բավարար լինելուց, դրանք խիստ ցածր են տնտեսության կայուն աճ ապահովելու գործում: Չնայած Արցախի կառավարության կողմից ներդրումների որոշիչ դերի գիտակցմանը, ձևավորված մակրոտնտեսական կայունությունը, ներդրումները կարգավորող օրենսդրական դաշտի, դրանք խրախուսող ու պաշտպանող ենթակառույցների առկայությունը, այս հարցում Սփյուռքի ակտիվ մասնակցությունը, այդուհանդերձ, պայմանավորված աշխարհաքաղաքական բարդ իրավիճակով բիզնեսի համար ռիսկայնության բարձր աստիճանով, ներդրումներն այստեղ չեն գտնվում ցանկալի մակարդակում:

Այս ամենն ուղղակիորեն և անուղղակիորեն իրենց ազդեցությանն են թողնում երկրի սոցիալական վիճակի և հատկապես բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա: ԱՀ-ում սոցիալական ոլորտի բարեփոխումները հստակ մշակված սոցիալական քաղաքականության գերակայությունների և նպատակների դասակարգմամբ չեն առաջնորդվել, ունեցել են առավելապես մարտավարական, քան ռազմավարական բնույթ: Երկրի կառավարության ջանքերն ուղղված խոցելի խմբերի կարիքների բավարարմանը, դեռևս կրում է չհամակարգված մոտեցում, քանզի սոցիալական քաղաքականությունը գտնվում է կայացման փուլում, իսկ առկա բացթողումները պայմանավորված են տնտեսական իրական հնարավորությունների վրա հիմնված սոցիալական քաղաքականության միասնական հայեցակարգի բացակայությամբ, սոցիալական ապահովության համակարգի ինստիտուցիոնալ և օրենսդրական հիմքերի անբավարարությամբ, սոցիալական գործընթացների հետազոտության համակարգի բացակայությամբ, ինչի ներդրումը կհստակեցնի իրականացվող բարեփոխումների սոցիալական հետևանքների կանխատեսումների հնարությունը:

Նշված խնդիրների հետազոտության անհրաժեշտությունը պայմանավորել է ատենախոսության թեմայի ընտրությունը, վեր հանված հարցերի ուսումնասիրության արդյունքներն ու խորությունը, ատենախոսության կառուցվածքը, որն էլ հիմք է ծառայել թեմայի արդիականության և երաշխավորության իրականացման համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

Հետազոտության օբյեկտ է հանդիսանում Արցախի Հանրապետության բնակչության ապահովության նվազեցման և բարեկեցության բարձրացման կազմակերպա-տնտեսական համակարգը, իսկ առարկա՝ այդ հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴՐԵՐԸ

Հետազոտության նպատակն է Արցախի Հանրապետությունում բնակչության բարեկեցության բարձրացման հիմնախնդիրների լուծման ուղիների բացահայտմամբ մատնանշել այն օպտիմալային հարցերը, որոնք առաջին հերթին հնարավորություն կտան նվազեցնել ապահովության մակարդակը, մեղմել դրա արությունը, նվազեցնել գործազրկության աստիճանը, ապահովել եկամուտների բաշխման արդարությունը և վարել

սոցիալական այնպիսի քաղաքականություն, ինչը կբերի իշխանությունների հանդեպ վստահության վերականգնմանը:

Ելնելով նշված նպատակներից ատենախոսությունում խնդիր է դրվել ուսումնասիրել ու լուծում տալ հետևյալ հարցերին.

• [redacted]ի հաստարկման ժամանակակից մոտեցումներն ու մոդելները,

• վեր հանել բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա ազդող գործոնները, դրանց կառավարման արդի կազմակերպատնտեսական մոտեցումները,

• վերլուծել բնակչության աղքատության հաղթահարման և կենսամակարդակի բարձրացման միջազգային փորձը՝ մշակելով Արցախում կիրառելի մոտեցումները,

• վերլուծել Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական ցուցանիշների դինամիկան, բացահայտել այն հիմնական գործոնները, որոնք կարող են բերել բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացմանը,

• ներկայացնել աղքատության հաղթահարման պետական աջակցության ծրագրերը և Արցախի Հանրապետությունում կիրառվող սոցիալական քաղաքականության առանձնահատկությունները,

• բացահայտել Արցախի Հանրապետությունում տնտեսական աճի ապահովման ու տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները, որոնք կնպաստեն աղքատության աստիճանի կրճատմանը և բարձրացնել բնակչության բարեկեցության աստիճանը,

• բացահայտել սոցիալական տրանսֆերտների ազդեցությունը հանրապետությունում աղքատության հաղթահարման գործում,

• վեր հանել աղքատության հաղթահարման պետական աջակցության կառուցակարգերը և սոցիալական քաղաքականության կատարելագործման ուղիները, որոնք կբերեն տնտեսության զարգացմանը և բնակչության բարեկեցության բարձրացմանը,

• իրականացվող ուսումնասիրությունների արդյունքների վերլուծության հիման վրա, մատնանշված հիմնախնդիրների լուծման նպատակով, ներկայացնել բնակչության բարեկեցության բարձրացման և աղքատության հաղթահարման առաջարկություններ Արցախի Հանրապետությունում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության հիմքում առաջադրված հիմնախնդիրների և խնդրի ուսումնասիրության շնորհիվ ստացվել են գիտական նորույթ պարունակող հետևյալ արդյունքները.

• Աշխատանքում բացահայտվել է աղքատության և բարեկեցության կատեգորիաների հակադարձ դիալեկտիկական և հայելային արտացոլման կապը:

• Բացահայտվել է ինֆլյացիոն երևույթների գրսևորումներին դիմակայելու համար բնակչության բարեկեցության մակարդակի նվազեցման դեմ պայքարելու սոցիալական պետական տրանսֆերտների ինդեքսավորման անհրաժեշտությունը,

• Բացահայտվել են զբոսաշրջությանը խոչընդոտող գործոնները և առաջարկվել է կիրառել այնպիսի կառուցակարգեր, որոնք կնպաստեն ԱՀ-ում զբոսաշրջիկների ներհոսքի կտրուկ ավելացմանը,

• Հիմնավորվել են Արցախի Հանրապետությունում տնտեսական աճի տեմպերի բարձրացման և տնտեսության զարգացման համար Հայաստանի միջոցով ԵԱՏՄ երկրների և Իրանի հետ տնտեսական ինտեգրման նախադրյալները և ակտիվ տնտեսական հարաբերություններ հաստատելու անհրաժեշտությունը,

• Առաջարկվում է ԱՀ-ում բնակչության բարեկեցության բարձրացման նպատակով վերանայել կիրառվող սոցիալական քաղաքականության որոշ տարրեր՝ մշակել սոցիալական աջակցության, սոցիալական երաշխիքների և սոցիալական ապահովության այնպիսի ծրագրեր, որոնք կերաշխավորեն նաև զոհված ազատամարտիկների ընտանիքների սոցիալական պաշտպանվածությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱ-ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Հետազոտության արդյունքների կիրառական նշանակությունը պայմանավորված է Արցախի Հանրապետությունում աղքատության հաղթահարման և բնակչության կենսամակարդակի բարձրացման անհրաժեշտությամբ, որը կարող է իրականացվել արդյունաբերության, գյուղատնտեսության, զբոսաշրջության, տարածաշրջանների համաչափ զարգացման շնորհիվ, ինչն էլ իր հերթին կբերի արտագաղթի փոխարեն ունենալ ներգաղթ, կմեծացնի բնակչության բնական աճի տեմպերը, կբարելավի երկրի ժողովրդագրական վիճակն իր բոլոր ածանցյալ հետևանքներով:

Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել ԱՀ-ում սոցիալական քաղաքականության մշակողների և իրագործողների կողմից (ԱՀ կառավարություն, տարածքային կառավարման մարմիններ, նյութական բարիքներ արտադրող և ծառայություններ մատուցող ձեռնարկություններ, դեպարտամենտներ, տվյալ հիմնախնդրով զբաղվող փորձագետներ և այլն):

:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական դրույթները, հետազոտությունների արդյունքները և առաջարկությունները քննարկվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոբիզնեսի կառավարման և Ագրարային էկոնոմիկայի ամբիոնների համատեղ նիստում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են ատենախոսի 9 գիտական հոդվածներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, շարադրված է 154 համակարգչային էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը, պարունակում է 32 աղյուսակ, 2 գծապատկեր, 107 անուն գրականության ցանկ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակն ու հիմնախնդիրները, տրված են առարկան և օբյեկտը, ներկայացված են ուսումնասիրության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գիտա–գործնական նշանակությունը:

Ատենախոսության **առաջին՝** «Բարեկեցության տեսամեթոդական հիմքերը» **գլխում** ուսումնասիրվել են տնտեսական աճը և դրա հաշվարկման ժամանակակից մոտեցումները և մոդելները, բնակչության կենսամակարդակի վրա ազդող գործոնները, դրանց կառավարման կազմակերպատնտեսական և գնահատման ժամանակակից մոտեցումներ, բնակչության աղքատության հաղթահարման և կենսամակարդակի բարձրացման միջազգային փորձը:

Ատենախոսության **երկրորդ՝** «Տնտեսական աճի եվ բարեկեցության մակարդակի վերլուծությունն ու գնահատականը Արցախի Հանրապետությունում» **գլխում** ներկայացվել են Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական ցուցանիշների վերլուծությունը, բարեկեցության մակարդակի վրա ազդող հիմնական գործոնները, դրանց վերլուծությունը և բարձրացման հիմնախնդիրները, աղքատության հաղթահարման պետական աջակցության ծրագրերը և սոցիալական քաղաքականությունը Արցախի Հանրապետությունում:

Ատենախոսության **երրորդ՝** «Բնակչության բարեկեցության բարձրացման եվ աղքատության հաղթահարման ուղիները Արցախի Հանրապետությունում» **գլխում** ներկայացվել են տնտեսական կայուն աճի ապահովման և տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները Արցախի Հանրապետությունում, սոցիալական տրանսֆերտները և դրանց դերը կենցաղային աղքատության հաղթահարման գործում, աղքատության հաղթահարման պետական աջակցության կառուցակարգերը և սոցիալական քաղաքականության կատարելագործման ուղիները Արցախի Հանրապետությունում:

Ատենախոսության **«Եզրակացություններ»** բաժնում ամփոփ ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Չնայած իր գրական արժանիքներին, ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից: Դրանք հետևյալն են.

Աշխատանքն առավել կշահեր, եթե բնակչության աղքատության հաղթահարման և կենսամակարդակի բարձրացման միջազգային փորձը ներկայացնելիս երկրները խմբավորվեին ըստ զարգացվածության մակարդակի:

Քանի որ բնակչության կենսամակարդակի կամ նրա բարեկեցության վերաբերյալ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ունենալ նաև պետության կողմից հաստատված նվազագույն սպառողական բյուջե, ապա նպատակահարմար կլիներ նաև այս ցուցանիշը առանձին ենթահարցերով ներկայացնել աշխատանքում:

Աշխատանքում առկա են որոշ տեխնիկական խնդիրներ, մասնավորապես՝ գրականության ցանկը համակարգված չէ և որոշ աղբյուրներում բացակայում է էջերի քանակը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության վերաբերյալ կատարված դիտողությունները չեն անդրադառնում հետազոտության գիտական արժեքի վրա և չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը ու ստացված արդյունքների նշանակությունը և բացասական ազդեցություն չեն թողնում հետազոտության ընդհանուր գնահատականի վրա:

Ատենախոսությունը ավարտուն գիտական հետազոտություն է, որտեղ կատարված վերլուծություններից բխող եզրահանգումների և եզրակացությունների հիման վրա արված առաջարկությունները, ինչպես նաև մշակված մոտեցումները կարող են գործնական կիրառություն գտնել Հայաստանում հանքարդյունաբերության զարգացման տնտեսա-էկոլոգիական հիմնախնդիրների լուծմանը:

Ռոզա Ցուրիի Ավագյանի «Բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմնախնդիրները եվ դրանց հաղթահարման ուղիները Արցախի Հանրապետությունում» թեմայով թեկնածուական ատենախոսության արդյունքները ունեն ինչպես գիտական, այնպես էլ գործնական ու կիրառական նշանակություն:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը և իր մեջ ներառում է հիմնական պայմաններն ու արդյունքները: Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են 9 գիտական հոդվածներում:

Ռոզա Ցուրիի Ավագյանի «Բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմնախնդիրները եվ դրանց հաղթահարման ուղիները Արցախի Հանրապետությունում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջների, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոչանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (30.06.2021թ., արձանագրություն թիվ 2):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոչանյանի անվ. ՏԻ ավագ գիտաշխատող տնտեսագիտության թեկնածու **Ս.Դալլաքյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոչանյանի անվ. ՏԻ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու **Տ. Փարսադանյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոչանյանի անվան ՏԻ ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, Ս. Դալլաքյանի և նույն ինստիտուտի գիտաշխատող տնտեսագիտության թեկնածու Տ. Փարսադանյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոչանյանի անվ. ՏԻ գիտ. քարտուղար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Գ.Բաղդասարյան**
«30» հունիսի 2021թ.